



EUROPEAN COURT OF HUMAN RIGHTS
COUR EUROPÉENNE DES DROITS DE L'HOMME

ԱՌԱՋԻՆ ԲԱԺԱՆՄՈՒՆՔ

ՓԱՐՍԱԴԱՆՅԱՆՆ ԸՆԴԴԵՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ

(գանգադ թիվ 5444/10)

ՎՃԻՌ

ԱՏՐԱՍԲՈՒՐԳ

14 փետրվարի 2019թ.

Սույն վճիռը վերջնական է, սակայն կարող է ենթարկվել խմբագրական փոփոխությունների:

Փարսադանյանն ընդդեմ Հայաստանի գործով,

Մարդու իրավունքների եվրոպական դատարանը (Առաջին բաժանմունք),
հանդես գալով Կոմիտեի հետեյալ կազմով՝

Քսենյա Տուրկովիչ [Ksenija Turković]՝ Նախագահ,

Քրիշտոֆ Վոյտիչեկ [Krzysztof Wojtyczek],

Արմեն Հարությունյան [Armen Harutyunyan]՝ դատավորներ,

եւ Ռենատա Դեգեներ [Renata Degener]՝ Բաժանմունքի քարտուղարի տեղակալ,

2019 թվականի հունվարի 22-ին անցկացնելով դռնփակ խորհրդակցություն,

կայացրեց հետեյալ վճիռը, որն ընդունվեց նույն օրը.

ԸՆԹԱՑԱԿԱՐԳԸ

1. Սույն գործը հարուցվել է «Մարդու իրավունքների եւ հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» կոնվենցիայի (Կոնվենցիա) 34-րդ հոդվածի համաձայն Հայաստանի Հանրապետության երեք քաղաքացիներ պրն Վոլոդյա Փարսադանյանի, տկն Սեդա Փարսադանյանի եւ տկն Լուսինե Փարսադանյանի (դիմումատուներ) կողմից ընդդեմ Հայաստանի Հանրապետության՝ 2010 թվականի հունվարի 19-ին Դատարան ներկայացված գանգատի (թիվ 5444/10) հիման վրա:

2. Դիմումատուներին ներկայացրել է Վանաձորում գործող իրավաբան պրն Կ. Թումանյանը: Հայաստանի Հանրապետության կառավարությունը (Կառավարություն) ներկայացրել է Մարդու իրավունքների եվրոպական դատարանում Հայաստանի Հանրապետության կառավարության լիազոր ներկայացուցիչ պրն Գ. Կոստանյանը:

3. 2014 թվականի մարտի 18-ին գույքից զրկելու, արդար դատաքննության իրավունքի եւ դատարանի մատչելիության բացակայության վերաբերյալ

բողոքների մասին ծանուցումն ուղարկվել է Կառավարություն, իսկ գանգատը մնացած մասով հայտարարվել է անընդունելի՝ համաձայն Դատարանի կանոնակարգի 54-րդ կանոնի 3-րդ կետի:

ՓԱՍՏԵՐԸ

I. ԳՈՐԾԻ ՓԱՍՏԱԿԱՆ ՀԱՆԳԱՄԱՆՔՆԵՐԸ

4. Դիմումատուները ծնվել են համապատասխանաբար 1933, 1940 և 1975 թվականներին և բնակվում են Թեղուտ գյուղում:

Ա. Գործի նախապատմությունը

5. 1970-ական թվականներին Լոռու մարզի Թեղուտ և Շնող գյուղերից համապատասխանաբար չորս և վեց կմ հեռավորության վրա հայտնաբերվել է պղնձամոլիբդենային հանքավայր (Թեղուտ):

6. 2001 թվականին «Արմենիան Քափըր Փրոգրամ» ՓԲԸ մասնավոր ընկերությունն ստացել է քսանհինգ տարի ժամկետով Թեղուտի պղնձամոլիբդենային հանքավայրի շահագործման համար ընդերքօգտագործման լիցենզիա:

7. 2007 թվականի նոյեմբերի 1-ին Կառավարությունն ընդունել է «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Շնողի և Թեղուտի գյուղական համայնքների վարչական սահմաններում որոշ տարածքներում բացառիկ՝ գերակա հանրային շահ ճանաչելու և հողերի նպատակային նշանակությունը փոփոխելու մասին» թիվ 1279-Ն որոշումը: Որոշման համաձայն՝ դրա հավելվածներում թվարկված հողատարածքների ձեռք բերող է համարվում «Արմենիան Քափըր Փրոգրամ» ՓԲԸ-ն կամ Թեղուտի պղնձամոլիբդենային

հանքավայրի շահագործման նախագծի իրականացման նպատակով դրա կողմից հիմնադրված «Թեղուտ» ՓԲԸ-ն: Դիմումատուներին պատկանող հողամասը թվարկված էր այն հողատարածքների շարքում, որոնք համարվում էին օտարման ենթակա գոտիներ:

Բ. Դիմումատուների գույքի օտարման առնչությամբ վարույթները

8. Դիմումատուները, որոնց ընտանիքը բաղկացած է երեք անդամից, ապրում են Թեղուտ գյուղում եւ իրենց ապրուստը վաստակում են գյուղատնտեսությամբ: Նրանց համատեղ սեփականության իրավունքով պատկանել է գյուղում գտնվող 0.430 հա վարելահող: Հողն օգտագործվում էր ընտանիքի համար մշակաբույսեր աճեցնելու, այգեգործության եւ իրենց անասուններին կերակրելու նպատակով:

9. Չպարզված օրը «Թեղուտ» ՓԲԸ-ն դիմումատուներին ուղարկել է նամակ, որով առաջարկվել է նրանց հողամասը գնել 231 000 ՀՀ դրամով (մոտավորապես 500 եվրո)՝ գումարած լրացուցիչ 15%, ինչպես պահանջվում է օրենքով՝ վերջնական առաջարկի գումարը դարձնելով 265 650 ՀՀ դրամ (մոտավորապես 578 եվրո):

10. Դիմումատուները չեն արձագանքել առաջարկին, քանի որ նրանց չի գոհացրել առաջարկվող փոխհատուցման գումարի չափը: Պարզվում է, որ նրանք չեն կարողացել ձեռք բերել իրենց գույքի՝ այլ ընկերության կողմից իրականացված գնահատում: Նրանք պնդում են, որ ոչ մի այլ գնահատող չի ցանկացել իրականացնել իրենց հողի շուկայական արժեքի անկախ գնահատում:

11. 2008 թվականի մայիսի 12-ին «Թեղուտ» ՓԲԸ-ն հայց է ներկայացրել դիմումատուների դեմ՝ պահանջելով նրանց պարտավորեցնել, որ ստորագրեն իրենց գույքը պետության կարիքների համար վերցնելու վերաբերյալ համաձայնագիր: Ընկերությունն իր հայցը հիմնավորել է, *inter alia* (ի թիվս այլնի),

«Օլիվեր գրուպ» ՍՊԸ լիցենզավորված գնահատման ընկերության կողմից իր պահանջով կազմված գնահատման եզրակացությամբ: Եզրակացության համաձայն՝ դիմումատուների հողամասի շուկայական արժեքը գնահատվել է 231 000 ՀՀ դրամ (մոտավորապես 500 եվրո):

12. Լոռու մարզային դատարանի վարույթի ընթացքում դիմումատուները պնդել են, որ իրենց հողի շուկայական արժեքը սխալ է հաշվարկվել, քանի որ գնահատման ժամանակ հաշվի են առնվել շուկայական ամենացածր գները, մինչդեռ մի քանի հողամասեր ձեռք են բերվել շատ ավելի բարձր գներով: Նրանք նաև պնդել են, որ հաշվի չի առնվել մրգատու ծառերի առկայությունը, եւ որ գնահատման եզրակացության մեջ սխալմամբ նշվել է, որ իրենց հողամասում առկա չէ ջրամատակարարման համակարգ, մինչդեռ այդպիսի համակարգ առկա է եղել, որն իրականում հեռացվել է գույքի վրա պատասխանող կողմի իրականացրած գործողությունների պատճառով:

13. 2008 թվականի հուլիսի 3-ին Լոռու մարզային դատարանում տեղի է ունեցել առաջին դատական նիստը: Ըստ Կառավարության՝ դիմումատուները պատշաճ ձևով ծանուցված են եղել վարույթի ամսաթվի մասին, սակայն չեն ներկայացել:

14. Վարույթի ընթացքում «Թեղուտ» ՓԲԸ-ն ներկայացրել է գնահատման մեկ այլ եզրակացություն դիմումատուների գույքի վերաբերյալ՝ նշելով, որ «Օլիվեր գրուպ» ՍՊԸ-ն կազմել է ուղղված եզրակացություն, որի համաձայն՝ հողի շուկայական արժեքը գնահատվել է 262 000 ՀՀ դրամ (մոտավորապես 570 եվրո): Այսպիսով, փոխհատուցման վերջնական գումարն օրենքով պահանջվող լրացուցիչ 15%-ի հետ կազմում էր 301 300 ՀՀ դրամ (մոտավորապես 655 եվրո):

15. 2008 թվականի հոկտեմբերի 6-ին Մարզային դատարանը բավարարել է «Թեղուտ» ՓԲԸ-ի հայցը՝ դիմումատուներին տրամադրելով ընդհանուր 301 300 ՀՀ դրամ (մոտավորապես 655 եվրո)՝ որպես փոխհատուցում:

16. Դիմումատուները վերաքննիչ բողոք են ներկայացրել՝ պնդելով, որ իրենք պատշաճորեն չեն ծանուցվել հետաձգված դատական նիստերի ամսաթվերի եւ ժամերի մասին:

17. 2009 թվականի հունվարի 29-ին Վերաքննիչ քաղաքացիական դատարանը բեկանել է Մարզային դատարանի վճիռը եւ գործն ուղարկել է նոր քննության:

18. 2009 թվականի փետրվարի 27-ին Լոռու մարզային դատարանում սկսվել է գործի քննությունը: Դատական նիստը նշանակվել է 2009 թվականի ապրիլի 2-ին: Կառավարությունը պնդել է, որ դիմումատուները պատշաճորեն ծանուցված են եղել դատական նիստի մասին, եւ որ ծանուցագիրը, ինչպես միշտ, ուղարկվել է նրանց հասցեներով:

19. 2009 թվականի ապրիլի 2-ին դիմումատուների ներկայացուցիչը խնդրել է հետաձգել գործի քննությունը: Դատական քննությունը հետաձգվել է եւ վերանշանակվել 2009 թվականի ապրիլի 22-ին:

20. 2009 թվականի ապրիլի 21-ին դիմումատուների ներկայացուցիչը դիմում է ներկայացրել Լոռու մարզային դատարան՝ խնդրելով հետաձգել գործի քննությունը: Համապատասխանաբար, 2009 թվականի ապրիլի 22-ին դատական քննությունը հետաձգվել է եւ վերանշանակվել 2009 թվականի ապրիլի 29-ին:

21. 2009 թվականի ապրիլի 27-ին դիմումատուների փաստաբանը խնդրել է Մարզային դատարանին նշանակել դատական փորձաքննություն՝ դիմումատուների հողամասի շուկայական արժեքը որոշելու համար, եւ խնդրել է կարգադրել, որ փորձաքննությունն իրականացվի «Հայաստանի Հանրապետության փորձագիտական կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության փորձագետների կողմից:

22. 2009 թվականի ապրիլի 29-ին Լոռու մարզային դատարանում տեղի է ունեցել դատական նիստ: Դատական նիստի ընթացքում պարզ է դարձել, որ առկա չեն տվյալներ այն մասին, թե արդյոք դիմումատուները ծանուցվել են, թե՛ ոչ: Այս հանգամանքներում Լոռու մարզային դատարանը որոշել է հետաձգել գործի քննությունը՝ հաշվի առնելով այն փաստը, որ դիմումատուները պատշաճ ձեւով ծանուցված չեն եղել դատական նիստի մասին: Հաջորդ դատական նիստը

նշանակվել է 2009 թվականի մայիսի 20-ին, այդ մասին ծանուցագիր է ուղարկվել ինչպես դիմումատուների ներկայացուցչին, այնպես էլ դիմումատուներին:

23. 2009 թվականի մայիսի 20-ին եւ՝ դիմումատուների ներկայացուցիչը, եւ՝ դիմումատուները ներկա են եղել դատական նիստին: Դիմումատուների ներկայացուցիչը խնդրել է դատարանին նշանակել դատական փորձաքննություն՝ դիմումատուների հողամասի շուկայական արժեքը որոշելու համար: Սակայն Լոռու մարզային դատարանը մերժել է դիմումատուների ներկայացուցչի խնդրանքը՝ հիմնվելով ներպետական օրենսդրության վրա, որի համաձայն՝ վարույթի յուրաքանչյուր կողմ ինքը պետք է ներկայացնի փաստերի վերաբերյալ ապացույցներ:

24. 2009 թվականի հունիսի 2-ին Լոռու մարզային դատարանը բավարարել է «Թեղուտ» ՓԲԸ-ի հայցը՝ գտնելով, *inter alia*, որ «Օլիվեր գրուպ» ՍՊԸ-ի կողմից կազմված գնահատման եզրակացությունները եղել են օրինական եւ թույլատրելի ապացույցներ՝ դիմումատուների՝ պետության կարիքների համար վերցման ենթակա գույքի շուկայական արժեքը որոշելու համար: Մարզային դատարանը մերժել է փաստաբանի խնդրանքը եւ դիմումատուներին հավասար մասնաբաժիններով տրամադրել է 301 300 ՀՀ դրամ (մոտավորապես 655 եվրո)՝ որպես փոխհատուցում:

25. 2009 թվականի հունիսի 22-ին դիմումատուների փաստաբանը վերաքննիչ բողոք է ներկայացրել՝ պնդելով, *inter alia*, որ փոխհատուցման գումարը եղել է ոչ բավարար: Նա պնդել է, որ Մարզային դատարանը դիմումատուների հակառակորդի կողմից ներկայացված եզրակացություններն ընդունել է որպես նրանց գույքի շուկայական արժեքի հաստատված ապացույց, եւ որ Դատարանը, առանց որեւէ հիմքի, մերժել է դատական փորձաքննություն նշանակելու պահանջը: Նա այնուհետեւ պնդել է, որ Մարզային դատարանը պետք է իրականացներ փորձաքննություն նշանակելու իր՝ օրենքով սահմանված հայեցողական լիազորությունը, քանի որ դրա անհրաժեշտությունն առաջացել էր վարույթի ընթացքում, եւ դիմումատուներն ինքնուրույն այլընտրանքային գնահատում տրամադրելու հնարավորություն չեն ունեցել:

26. Գործի նյութերի համաձայն՝ 2009 թվականի հուլիսի 24-ին նշանակված՝ Վերաքննիչ դատարանի դատական նիստի վերաբերյալ ծանուցագրերը 2009 թվականի հուլիսի 10-ին ուղարկվել են դիմումատուներին, սակայն նրանք չեն ներկայացել նիստին:

27. 2009 թվականի հուլիսի 24-ին տեղի է ունեցել Վերաքննիչ քաղաքացիական դատարանի նիստը. դիմումատուները եւ նրանց ներկայացուցիչը ներկա չեն եղել:

28. 2009 թվականի օգոստոսի 7-ին Վերաքննիչ քաղաքացիական դատարանն անփոփոխ է թողել Մարզային դատարանի վճիռը՝ գտնելով, որ վերջինիս որոշումը՝ դատական փորձաքննություն չնշանակելու մասին, լավ հիմնավորված էր, քանի որ դրա անհրաժեշտությունը չկար: Վերաքննիչ դատարանն այնուհետեւ գտել է, որ փոխհատուցման գումարը ճիշտ է որոշվել՝ հիմնվելով «Օլիվեր գրուպ» ՍՊԸ-ի կողմից կազմված գնահատման ուղղված եզրակացության վրա՝ հաշվի առնելով, որ եզրակացությունը վարույթի ընթացքում ներկայացված միակ օրինական եւ թույլատրելի ապացույցն էր:

29. Ըստ դիմումատուների՝ Վերաքննիչ դատարանի որոշումը իրենց փաստաբանին չի տրամադրվել:

30. 2009 թվականի հոկտեմբերի 1-ին դիմումատուների փաստաբանը խնդրել է Մարզային դատարանի թույլտվությունը՝ գործի նյութերին ծանոթանալու համար: Իր պահանջը բավարարվելուց հետո փաստաբանը պատճենել է Վերաքննիչ դատարանի որոշումը՝ վճռաբեկ բողոք ներկայացնելու նպատակով:

31. 2009 թվականի հոկտեմբերի 9-ին փաստաբանը ներկայացրել է վճռաբեկ բողոք՝ բերելով Վերաքննիչ դատարանում ներկայացված իր բողոքներին համանման բողոքներ: Փաստաբանը նաեւ նշել է, որ Վերաքննիչ դատարանը պատշաճ ձեւով չի ծանուցել իրեն վարույթի մասին եւ վերաքննիչ բողոքը քննել է իր բացակայությամբ: Բացի այդ, նա խնդրել է վերականգնել վճռաբեկ բողոք ներկայացնելու բաց թողնված ժամկետը՝ բացատրելով, որ

բողոքն ուշ է ներկայացվել Վերաքննիչ դատարանի կողմից 2009 թվականի օգոստոսի 7-ի որոշման պատճենն իրեն չտրամադրելու պատճառով՝ չնայած այն փաստին, որ ինքը վարույթի ընթացքում եղել է դիմումատուների լիազորված ներկայացուցիչը:

32. 2009 թվականի հոկտեմբերի 28-ին Վճռաբեկ դատարանը բողոքը ճանաչել է անընդունելի՝ ուշացած ներկայացվելու պատճառով: Այդպիսով, Դատարանը գտել է, որ բողոքն ուշ ներկայացնելու մասով փաստաբանի կողմից բերված պատճառները հիմնավորված չէին՝ հաշվի առնելով այն փաստը, որ դիմումատուներին որոշման պատճենը տրամադրվել էր ողջամիտ ժամկետներում:

II. ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ՆԵՐՊԵՏԱԿԱՆ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅՈՒՆԸ

Ա. 1995 թվականի Սահմանադրություն (ուժի մեջ է 2005 թվականի դեկտեմբերի 6-ից՝ 2005 թվականի նոյեմբերի 27-ին ընդունված փոփոխություններից հետո)

33. 18-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի իր իրավունքների եւ ազատությունների դատական պաշտպանության արդյունավետ միջոցների իրավունք:

34. 19-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի իր խախտված իրավունքները վերականգնելու, ինչպես նաեւ իրեն ներկայացված մեղադրանքի հիմնավորվածությունը պարզելու համար հավասարության պայմաններում, արդարության բոլոր պահանջների պահպանմամբ, անկախ եւ անկողմնակալ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում իր գործի հրապարակային քննության իրավունք:

35. 31-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք իրավունք ունի իր հայեցողությամբ տիրապետելու, օգտագործելու, տնօրինելու եւ կտակելու իր սեփականությունը: Ոչ ոքի չի կարելի զրկել սեփականությունից, բացառությամբ

դատական կարգով՝ օրենքով նախատեսված դեպքերի: Սեփականության օտարումը հասարակության եւ պետության կարիքների համար կարող է կատարվել միայն բացառիկ՝ գերակա հանրային շահերի դեպքերում, օրենքով սահմանված կարգով, նախնական համարժեք փոխհատուցմամբ:

Բ. Քաղաքացիական դատավարության օրենսգիրք (ուժի մեջ է 1999 թվականից)

36. 6-րդ հոդվածի համաձայն՝ քաղաքացիական դատավարությունն իրականացվում է կողմերի մրցակցության եւ իրավահավասարության հիման վրա:

37. Օրենսգրքի 53-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ դատարանի համար որեւէ ապացույց նախապես հաստատվածի ուժ չունի:

38. 60-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գործի քննության ժամանակ ծագող հատուկ գիտելիքներ պահանջող հարցերի պարզաբանման նպատակով դատարանը կարող է կողմի (կողմերի) միջնորդությամբ կամ իր նախաձեռնությամբ փորձաքննություն նշանակել:

39. Օրենսգրքի 60-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ դատարանը նախազգուշացնում է փորձագետին՝ ակնհայտ կեղծ եզրակացություն տալու համար քրեական պատասխանատվության մասին:

40. 61-րդ հոդվածի համաձայն՝ գործին մասնակցող անձինք իրավունք ունեն ներկա գտնվելու փորձաքննությանը՝ բացառությամբ այն դեպքերի, երբ նրանց ներկայությունը կարող է խանգարել փորձագետի բնականոն աշխատանքին:

41. Համաձայն 221¹-րդ հոդվածի՝ Վերաքննիչ դատարանի՝ գործն ըստ էության լուծող դատական ակտերն օրինական ուժի մեջ են մտնում հրապարակման պահից մեկ ամիս հետո:

42. Համաձայն 229-րդ հոդվածի՝ գործն ըստ էության լուծող դատական ակտի դեմ վճռաբեկ բողոք կարող է բերվել մինչեւ այդ ակտի օրինական ուժի մեջ մտնելու համար սահմանված ժամկետը:

Գ. «Հասարակության եւ պետության կարիքների համար սեփականության օտարման մասին» օրենք (ուժի մեջ է 2006 թվականի դեկտեմբերի 30-ից)

43. 3-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հասարակության եւ պետության կարիքների համար սեփականության օտարման սահմանադրական հիմքը բացառիկ՝ գերակա հանրային շահն է:

44. 3-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ հասարակության եւ պետության կարիքների համար սեփականության օտարման սահմանադրական պայմաններն են՝

ա) օտարումը պետք է իրականացվի օրենքով սահմանված կարգով.

բ) օտարվող սեփականության դիմաց պետք է տրվի նախնական համարժեք փոխհատուցում (այսուհետ՝ փոխհատուցում):

45. 4-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հանրային շահը պետք է գերակա լինի օտարվող սեփականության սեփականատիրոջ շահերից, եւ գերակա հանրային շահի արդյունավետ իրագործումը չի կարող ապահովվել առանց տվյալ սեփականության օտարման:

46. 4-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գերակա հանրային շահը կարող է հետապնդել, *inter alia*, ընդերքօգտագործման բնագավառում համապետական կամ համայնքային կարելու նշանակություն ունեցող ծրագրերի իրականացման ապահովման նպատակ: Պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինների բյուջե լրացուցիչ եկամուտների ապահովման նպատակն ինքնին չի հանդիսանում բացառիկ՝ գերակա հանրային շահ:

47. 11-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ օտարվող սեփականության դիմաց սեփականատիրոջը վճարվում է համարժեք փոխհատուցում: Համարժեք է համարվում օտարվող գույքի շուկայական արժեքից տասնհինգ տոկոս ավելի գումարը:

48. 11-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ անշարժ գույքի կամ անշարժ գույքի նկատմամբ գույքային իրավունքների շուկայական արժեքի գնահատումն իրականացվում է «Անշարժ գույքի գնահատման գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով:

Դ. «Անշարժ գույքի գնահատման գործունեության մասին» օրենք (տվյալ ժամանակահատվածում գործող)

49. 8-րդ հոդվածի համաձայն՝ անշարժ գույքի գնահատումը պարտադիր է անշարժ գույքը պետության կամ համայնքների կարիքների համար ձեռք բերելու (վերցնելու) դեպքերում:

50. 15-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ անշարժ գույքի գնահատման գործունեություն իրականացնող անձինք իրավունք ունեն կիրառելու անշարժ գույքի գնահատման ինքնուրույն մեթոդներ՝ գնահատման ստանդարտին համապատասխան:

Ե. Հայաստանի Հանրապետության կառավարության 2007 թվականի նոյեմբերի 1-ի «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Շնողի եւ Թեղուտի գյուղական համայնքների վարչական սահմաններում որոշ տարածքներում բացառիկ՝ գերակա հանրային շահ ճանաչելու եւ հողերի նպատակային նշանակությունը փոփոխելու մասին» թիվ 1279-Ն որոշում

51. Թեղուտի պղնձամոլիբդենային հանքավայրի շահագործման նախագծի իրականացման նպատակով եւ հաշվի առնելով հանքահարստացուցիչ համալիրի կառուցման ու գործարկման հեռանկարները՝ Կառավարությունը որոշել է Լոռու մարզի Շնողի եւ Թեղուտի գյուղական համայնքների վարչական սահմաններում գտնվող 81,483 հա ընդհանուր մակերեսով գյուղատնտեսական նշանակության հողերի նկատմամբ ճանաչել բացառիկ՝ գերակա հանրային շահ: Որոշման համաձայն՝ տնտեսության եւ ենթակառուցվածքների զարգացման հետ կապված հանրային շահը, ինչպես նաեւ ավելի բարձր մակարդակներում արտադրության եւ արտահանման հետ կապված շահերը գերակայում են օտարվող սեփականության սեփականատերերի անձնական շահերի նկատմամբ:

ԻՐԱՎՈՒՆՔԸ

I. ԿՈՆՎԵՆՏԻԱՅԻ ԹԻՎ 1 ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆ 1-ԻՆ ՀՈԴՎԱԾԻ ԵՆԹԱԴՐՅԱԼ ԽԱԽՏՈՒՄԸ

52. Դիմումատուները Կոնվենցիայի թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածի համաձայն բողոքել են, որ իրենց գույքից զրկելը չի համապատասխանել օրինականության պահանջին, չի բխել որեւէ հանրային շահից, եւ որ փոխհատուցման գումարը եղել է ոչ բավարար: Մասնավորապես, նրանք բողոքել են, որ օրենքն այդ առնչությամբ բավարար կանխատեսելի չէր, քանի որ դրանում նշված չէին պետության կարիքների համար վերցման ենթակա գույքի շուկայական արժեքը որոշելու չափորոշիչները:

53. Կոնվենցիայի թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածն ունի հետեւյալ բովանդակությունը.

«Յուրաքանչյուր ֆիզիկական կամ իրավաբանական անձ ունի իր գույքից անարգել օգտվելու իրավունք: Ոչ ոքի չի կարելի զրկել իր գույքից, բացառությամբ ի շահ հանրության եւ այն պայմաններով, որոնք նախատեսված են օրենքով ու միջազգային իրավունքի ընդհանուր սկզբունքներով:

Նախորդ դրույթները, այնուամենայնիվ, չեն խոչընդոտում պետության՝ այնպիսի օրենքներ կիրառելու իրավունքը, որոնք նա անհրաժեշտ է համարում ընդհանուր շահերին համապատասխան, սեփականության օգտագործման նկատմամբ վերահսկողություն իրականացնելու կամ հարկերի կամ մյուս գանձումների կամ տուգանքների վճարումն ապահովելու համար»:

Ա. Ընդունելիությունը

54. Դատարանը նշում է, որ այս բողոքը Կոնվենցիայի 35-րդ հոդվածի 3-րդ կետի «ա» ենթակետի իմաստով ակնհայտ անհիմն չէ: Դատարանն այնուհետև նշում է, որ այն անընդունելի չէ որեւէ այլ հիմքով: Հետեւաբար այն պետք է հայտարարվի ընդունելի:

Բ. Ըստ էության քննությունը

1. Կողմերի փաստարկները

ա) Դիմումատուները

55. Դիմումատուները պնդել են, որ իրենց օտարված հողը իրենց եկամտի միակ աղբյուրն է եղել: Նրանք պնդել են, որ իրենց գույքից զրկելը չի համապատասխանել օրինականության պահանջին, չի բխել որեւէ հանրային շահից, եւ որ փոխհատուցման գումարը եղել է ոչ բավարար: Ինչ վերաբերում է օրինականության պահանջին, ապա նրանք պնդել են, որ օրենքն այդ առնչությամբ բավարար կանխատեսելի չէր, քանի որ դրանում նշված չէին պետության կարիքների համար վերցման ենթակա գույքի շուկայական արժեքը որոշելու չափորոշիչները: Դիմումատուները հերքել են, որ իրենց հողի օտարումն իրականացվել է «հանրային շահի» հիմքերով:

56. Դիմումատուներն այնուհետև պնդել են, որ իրենց հողի շուկայական արժեքի գնահատումն իրականացվել է համեմատական մեթոդի հիման վրա, որը չէր կարող պատշաճ ձեւով արտացոլել դրա իրական շուկայական արժեքը: Ավելին, որպես փոխհատուցում իրենց ստացած գումարը եղել է օտարման գործընթացն սկսելու ժամանակահատվածում օտարված հողի կադաստրային արժեքից շատ ավելի ցածր եւ ակնհայտորեն չի համապատասխանել տվյալ հողի իրական արժեքին: Նրանք հղում են կատարել Կառավարության 2003 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 746 որոշմանը, որի համաձայն՝ նույն գոտում գտնվող հողի կադաստրային արժեքը մեկ քառակուսի մետրի համար կազմել է 222 ՀՀ դրամ:

բ) Կառավարությունը

57. Կառավարությունը պնդել է, որ դիմումատուներին գույքից զրկելը «նախատեսված է եղել օրենքով» եւ «միջազգային իրավունքի ընդհանուր սկզբունքներով»: Ներպետական օրենքի համաձայն՝ անշարժ գույքի միավորի շուկայական արժեքը որոշելը պետք է իրականացվեր «Անշարժ գույքի գնահատման գործունեության մասին» օրենքին համապատասխան, որը գույքի օտարման համար տրվող փոխհատուցման չափը սահմանելու եւ հաշվարկելու մասով բավականաչափ հստակ էր: Քանի որ այդ օրենքն ուժի մեջ էր մտել 2005 թվականին, այն դիմումատուների համար կանխատեսելի էր: Ավելին, դիմումատուների հողի օտարումն իրականացվել էր՝ ելնելով հանրային շահերից, եւ այն հետապնդում էր տնտեսության եւ ենթակառուցվածքների զարգացմանն ուղղված իրավաչափ նպատակ, ինչպես նաեւ բխում էր ավելի բարձր մակարդակներում արտադրության եւ արտահանման հետ կապված շահերից: Հանրային շահի այս հայեցակետերը գերակա են եղել դիմումատուների մասնավոր շահի նկատմամբ:

58. Ինչ վերաբերում է արդարացի հավասարակշռությանը, ապա Կառավարությունն ընդգծել է, որ դիմումատուների հողի օտարումն արդարացի հավասարակշռություն է հաստատել հանրային ընդհանուր շահերի պահանջների եւ դիմումատուների գույքի նկատմամբ իրավունքների պաշտպանության պահանջմունքների միջեւ: Դիմումատուներին վճարված փոխհատուցումը եղել է հետապնդվող նպատակին համաչափ: Տվյալ հողամասի շուկայական արժեքը հաշվարկվել է եկամտային եւ համեմատական մեթոդների կիրառմամբ: Համեմատական մեթոդի կիրառման ժամանակ հաշվի են առնվել գյուղատնտեսական նշանակության հողերի շուկայական արժեքի վրա ազդող մի քանի գործոններ, ինչպիսիք են գույքային իրավունքները եւ սահմանափակումները, հողամասի արտաքին տեսքը, ջրամատակարարման համակարգի առկայությունը, հողամասի չափսերը, տեղանքը եւ հողամասի բերքատվությունը, որեւէ տրանսպորտային միջոցի հասանելիության

առկայությունը եւ հողամասի թերության աստիճանը եւ քարի պարունակությունը: Եկամտային մեթոդի կիրառմամբ հաշվի են առնվել գյուղատնտեսական նշանակության տվյալ հողերում աճեցվող մշակաբույսերի համար անհրաժեշտ ծախսերը եւ դրանցից ակնկալվող եկամուտները: Տվյալ հողամասի շուկայական արժեքը հաշվարկելու համար օգտագործվել են բերրիության միջին ցուցանիշները: Շուկայական արժեքի գնահատման համար օգտագործվել են պետության կարիքների համար օտարման ոչ ենթակա՝ հարեանությամբ գտնվող եւ համեմատելի հողամասերի տվյալներ: Ավելին, Կառավարության՝ 2003 թվականի դեկտեմբերի 24-ի թիվ 1746-Ն որոշումը, որին դիմումատուները, ըստ երեսույթին, հղում էին կատարում, կիրառելի չէր գյուղատնտեսական նշանակության հողերի կադաստրային արժեքը որոշելու մասով:

59. Կառավարությունը պնդել է, որ դիմումատուների վրա որեւէ կերպ չի դրվել «առանձին եւ ավելորդ բեռ»: Դիմումատուներն ունեցել են բոլոր հնարավորությունները, *inter alia*, ներկայացնելու գնահատման այլ եզրակացություններ, ներկայացնելու միջնորդություններ, բողոքներ եւ օգտվելու իրենց՝ դատարանի մատչելիության արդյունավետ իրավունքից: Նրանք նույնիսկ ազատվել են պետական տուրքի վճարումից Վերաքննիչ դատարան եւ Վճռաբեկ դատարան դիմելիս: Նրանց իրավունքները լիովին երաշխավորված են եղել, եւ ներպետական վարույթներն ու նրանց հողի օտարումն ամբողջությամբ համապատասխանել են ազգային օրենսդրությանը եւ Կոնվենցիային: Այսպիսով, Կոնվենցիայի թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածի խախտում տեղի չի ունեցել:

2. Դատարանի գնահատականը

60. Սույն գործում վիճելի չէ այն փաստը, որ տեղի է ունեցել «գույքից զրկում» Թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածի երկրորդ նախադասության իմաստով: Ուստի Դատարանը պետք է պարզի, թե արդյոք վիճարկվող գույքից զրկելն այդ դրույթի համաձայն հիմնավորված է եղել:

61. Դատարանը կրկին նշում է, որ Թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածի հետ համատեղելի լինելու համար օտարմանն ուղղված միջոցառումը պետք է բավարարի հետեւյալ երեք պայմանները. այն պետք է իրականացվի ազգային իշխանությունների կողմից ցանկացած կամայական գործողություն բացառող՝ «օրենքով նախատեսված պայմաններին համապատասխան», պետք է բխի «հանրային շահից», ինչպես նաեւ դրանով պետք է հաստատվի արդարացի հավասարակշռություն սեփականատիրոջ իրավունքների եւ համայնքային շահերի միջեւ (տե՛ս, ի թիվս այլ վճիռների, *Վիստինջ և Պերեպոլկինս եւ Պերեպոլկինսն ընդդեմ Լատվիայի* [ՄԴ] [*Vistiņš and Perepjolkins v. Latvia* [GC]], թիվ 71243/01, § 94, 2012 թվականի հոկտեմբերի 25): Հետեւաբար Դատարանն անցնում է այն հարցի ուսումնասիրությանը, թե արդյոք սույն գործում բավարարվել են այդ երեք պայմանները:

ա) «Օրենքով նախատեսված պայմաններին համապատասխան»

62. Սույն գործում վիճելի չէ այն փաստը, որ դիմումատուների գույքի օտարումն իրականացվել է «Հասարակության եւ պետության կարիքների համար սեփականության օտարման մասին» օրենքի հիման վրա: Այդ օրենքի 11-րդ հոդվածի 3-րդ մասը հղում է կատարում «Անշարժ գույքի գնահատման գործունեության մասին» օրենքին, որով նախատեսվում են անշարժ գույքի գնահատման մեթոդները (տե՛ս վերելում՝ 48-50-րդ պարբերությունները):

63. Դատարանը, իր ավելի վաղ հաստատված նախադեպային իրավունքի համաձայն, արդեն գտել է, որ վերոնշյալ իրավական դրույթները բավարար չափով հստակ են եղել՝ հնարավորություն ընձեռելով դիմումատուներին, ընդհանուր առմամբ, կանխատեսել, թե ինչպես էր գնահատվելու իրենց գույքի շուկայական արժեքը (տե՛ս *Օսմանյանը եւ Ամիրաղյանն ընդդեմ Հայաստանի* [Osmanyanyan and Amiraghyanyan v. Armenia], թիվ 71306/11, § 58, 2018 թվականի

հոկտեմբերի 11): Դատարանի համար անհիմն չէր, որ գնահատման ընթացքում օգտագործվող որոշակի մեթոդներ ընտրելու հարցը դրված է գնահատողի վրա, որն ընտրում է կոնկրետ իրավիճակի համար համապատասխան մեթոդ՝ կախված տվյալ անշարժ գույքի առանձնահատկություններից (նույն տեղում, § 57): Քանի որ դիմումատուները կարող էին վիճարկել իրենց գույքը ձեռք բերողի կողմից վարձված գնահատողի պատրաստած եզրակացությունը, Դատարանը գտնում է, որ դիմումատուների համար ապահովված են եղել կամայականությունների դեմ բավարար երաշխիքներ: Հետևաբար կարելի է համարել, որ վիճարկվող օտարումն իրականացվել է «օրենքով նախատեսված պայմաններին համապատասխան»:

բ) «Բխում է հանրային շահից»

64. Դատարանը կրկին նշում է, որ քանի որ ազգային իշխանություններն անմիջականորեն տեղեկացված են իրենց հասարակության ու դրա կարիքների մասին, ընդհանուր առմամբ, նրանք միջազգային դատավորներից ավելի լավ կարող են գնահատել, թե ինչն է «բխում հանրային շահից»: Կոնվենցիայով սահմանված պաշտպանության համակարգի համաձայն՝ ազգային իշխանությունները պետք է իրականացնեն հանրությանը մտահոգող խնդրի առկայության նախնական գնահատում՝ հիմնավորելով գույքից զրկելու միջոցառումները: Այստեղ, ինչպես մյուս այն ոլորտներում, որոնց վրա տարածվում են Կոնվենցիայի երաշխիքները, ազգային իշխանությունները համապատասխանաբար ունեն հայեցողական լիազորությունների որոշակի շրջանակ: Ավելին, «հանրային շահը» միանշանակ լայն հասկացություն է: Մասնավորապես, գույքի օտարման մասին օրենքներ ընդունելու որոշումն ընդհանուր առմամբ կներառի քաղաքական, տնտեսական եւ սոցիալական հարցերի քննարկում: Դատարանը, բնական համարելով այն փաստը, որ սոցիալական եւ տնտեսական քաղաքականությունների իրականացման համար օրենսդրի հայեցողական լիազորությունների շրջանակը պետք է լինի լայն, կհարգի օրենսդրի որոշումն այն մասով, թե ինչն է «բխում հանրային շահից», եթե

այդ որոշումն ակնհայտ անհիմն չէ (տե՛ս *Բեյելերն ընդդեմ Իտալիայի* [ՄՊ] [*Beyeler v. Italy* [GC]], թիվ 33202/96, § 112, ՄԻԵԴ 2000-Ի եւ վերելում հիշատակված՝ *Վիստինյի եւ Պերեպյոլկինսի գործը*, § 106):

65. Կառավարությունը պնդել է, որ պետության համար անհրաժեշտ է եղել օտարել դիմումատուների հողը՝ Թեղուտի պղնձամոլիբդենային հանքավայրի շահագործման նախագծի իրականացման արդյունքում տնտեսության եւ ենթակառուցվածքների զարգացման համար: Դատարանը չունի որեւէ համոզիչ ապացույց, որի հիման վրա կարելի է եզրակացնել, որ այդ պատճառներն ակնհայտորեն զերծ են եղել որեւէ ողջամիտ հիմքից (տես, ի հակադրության դրա, *Տկաչեյն ընդդեմ Ռուսաստանի* [*Tkachevy v. Russia*], թիվ 35430/05, § 50, 2012 թվականի փետրվարի 14):

գ) Վիճարկվող միջոցառման համաչափությունը

66. Թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածով պահանջվում է, որ ցանկացած միջամտություն պետք է ողջամտորեն համաչափ լինի հետապնդվող նպատակին (տե՛ս *Յահնը եւ այլք ընդդեմ Գերմանիայի* [ՄՊ] [*Jahn and Others v. Germany*], թիվ 46720/99 եւ մյուս 2-ը, §§ 81-94, ՄԻԵԴ 2005-VI): Անհրաժեշտ արդարացի հավասարակշռություն չի հաստատվի, եթե տվյալ անձը կրում է առանձին եւ ավելորդ բեռ (տե՛ս *Ստեֆանետին եւ այլք ընդդեմ Իտալիայի* [*Stefanetti and Others v. Italy*]), թիվ 21838/10 եւ մյուս 7-ը, § 66, 2014 թվականի ապրիլի 15):

67. Համապատասխան օրենսդրությամբ նախատեսված փոխհատուցման պայմանները հատուկ նշանակություն ունեն գնահատելու համար, թե արդյոք վիճարկվող միջոցառմամբ ապահովվում է անհրաժեշտ արդարացի հավասարակշռությունը, եւ մասնավորապես՝ արդյոք այն անհամաչափ բեռ է առաջացնում դիմումատուների համար (տե՛ս համապատասխան սկզբունքների ամփոփումը վերելում հիշատակված՝ *Վիստինյի եւ Պերեպյոլկինսի* գործում, §§ 110-14):

68. Դիմումատուները, հիմնվելով Կառավարության՝ 2003 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 746 որոշման վրա, պնդել են, որ իրենց կողմից ստացված փոխհատուցումն իրենց հողի կադաստրային արժեքից զգալիորեն ցածր է եղել, որը, ըստ նրանց պնդման, մեկ քառակուսի մետրի համար 222 ՀՀ դրամ էր (տե՛ս վերելում՝ 56-րդ պարբերությունը): Այնուամենայնիվ, Կառավարության 2003 թվականի դեկտեմբերի 24-ի թիվ 1746-Ն որոշման մեջ, որով սահմանվում են հողի կադաստրային արժեքը որոշելու գործակիցները, եւ որում Շնող գյուղն իսկապես նշված է այն գոտու ցանկում, որի գործակիցը համապատասխանում է մեկ քառակուսի մետրի համար դիմումատուների կողմից պահանջվող գումարին, հստակ նշված է, որ այս որոշումը կիրառելի չէ գյուղատնտեսական նշանակության հողերի կադաստրային արժեքը որոշելու համար (տե՛ս վերելում՝ 58-րդ պարբերությունը):

69. Սույն գործով չի վիճարկվում այն, որ դիմումատուները, ներպետական օրենսդրության համաձայն, ունեցել են լրիվ փոխհատուցման իրավունք, որը ներառում էր նրանց գույքի գնահատված շուկայական արժեքը եւ այդ գումարի լրացուցիչ 15 տոկոսը: Այնուամենայնիվ, դատարանները դիմումատուներին վճարման ենթակա փոխհատուցման գումարի չափը որոշել են՝ բացառապես հիմնվելով «Օլիվեր գրուպ» ՍՊԸ-ի կողմից կազմված գնահատման եզրակացության վրա, որը փոփոխել է իր սկզբնական գնահատումը՝ վարույթի ընթացքում ներկայացնելով ուղղված եզրակացություն: Չնայած այն փաստին, որ դիմումատուներն ըստ օրենքի հնարավորություն են ունեցել ներկայացնելու այլընտրանքային գնահատման եզրակացություն, ըստ երեւույթին գործնականում զրկված են եղել այդպիսի հնարավորությունից, քանի որ գնահատման լիցենզավորված այլ ընկերություններ հրաժարվել են մեկ այլ գնահատում իրականացնել: Դատարանները չեն իրականացրել փորձաքննություն նշանակելու իրենց հայեցողական լիազորությունը՝ որոշելու համար դիմումատուների գույքի իրական շուկայական արժեքը, որը վերջիններիս պնդմամբ շատ ցածր էր գնահատվել:

70. Դատարանը նկատում է, որ օգտագործելով անշարժ գույքի գնահատման համեմատական մեթոդը՝ փորձագետները դիմումատուների հողամասի շուկայական արժեքը որոշել են օտարման նույն գոտում գտնվող այլ հողամասերի վաճառքի գների հետ համեմատությամբ: Դատարանը հաշվի է առնում իր վերոնշյալ եզրահանգումն այն մասին, որ համապատասխան ներպետական դրույթները բավարար չափով կանխատեսելի են եղել այն մասով, որ պրոֆեսիոնալ փորձագետը պետք է օրինականորեն ազատ լինի անշարժ գույքի գնահատման համապատասխան մեթոդն ընտրելու հարցում (տե՛ս վերելում՝ 63-րդ պարբերությունը): Այնուամենայնիվ, հարկ է նշել, որ այն իրավիճակում, երբ դիմումատուների հողի շուկայական արժեքը որոշվել է նույն տարածքում գտնվող հողամասերի վաճառքի գների հիման վրա, չի կարելի բացառել, որ դիմումատուները ստացված փոխհատուցման գումարով չէին կարողանա ձեռք բերել օտարման ոչ ենթակա մեկ այլ տարածքում գտնվող համարժեք հող կամ այն գտնելու հետ կապված՝ առնվազն լուրջ դժվարություններ կունենային:

71. Չսահմանափակելով համապատասխան ներպետական դրույթները եւ այս հարցերով պետության հայեցողական լիազորությունների շրջանակը՝ Դատարանը համարում է, որ կարող են լինել այնպիսի իրավիճակներ, երբ տվյալ անշարժ գույքի շուկայական գինն արտահայտող փոխհատուցումը՝ նույնիսկ օրենքով նախատեսված լրացուցիչ տոկոսի ավելացմամբ, չի համարվի բավարար փոխհատուցում՝ գույքից զրկելու դիմաց: Դատարանը կարծում է, որ նման իրավիճակ կարող է առաջանալ մասնավորապես այն դեպքում, երբ գույքը, որից անձը զրկվում է, իր եկամտի հիմնական, եթե ոչ միակ աղբյուրն է եղել, եւ առաջարկվող փոխհատուցումը չի համապատասխանել այդ կորստին (տե՛ս *Լալեմենթն ընդդեմ Ֆրանսիայի [Lallement v. France]*, թիվ 46044/99, § 18, 2002 թվականի ապրիլի 11, տե՛ս նաեւ վերելում հիշատակված՝ *Օսմանյանի եւ Ամիրադյանի* գործը, § 69):

72. Սույն գործում դիմումատուները նշել են, որ որպես ընտանեկան միավոր՝ իրենք տնտեսապես կախված են եղել տվյալ հողից, որը եղել է իրենց եկամտի միակ աղբյուրը (տե՛ս վերելում՝ 55-րդ պարբերությունը): Այս փաստարկը չի հերքվել պատասխանող Կառավարության կողմից (տե՛ս վերելում՝ 57-59-րդ պարբերությունները): Այս հիմնական հայեցակետը, մասնավորապես այն, որ օտարման հետեանքով դիմումատուները կորցրել են իրենց եկամտի միակ աղբյուրը, հաշվի չի առնվել ներպետական դատարանների կողմից՝ հատկացվող պատշաճ փոխհատուցման գումարի վերաբերյալ իրենց որոշումներում: Դատարանները որոշել են, որ անկախ հանգամանքներից, դիմումատուներին պետք է տրամադրվի փոխհատուցում, որի չափը որոշվել էր օտարման ենթակա տարածքում գտնվող անշարժ գույքի գների եւ ակնկալվող եկամուտների հիման վրա: Նրանք չեն դիտարկել այն հարցը, թե արդյոք տրամադրվող փոխհատուցումը կծածկի դիմումատուների՝ իրենց ապրուստը հոգալու միջոցներից զրկվելու հետ կապված փաստացի կորուստը, կամ արդյոք այն առնվազն բավարար էր, որպեսզի նրանք ձեռք բերեին համարժեք հող այն տարածքում, որտեղ նրանք ապրում էին:

73. Ելնելով վերոնշյալից՝ Դատարանը գտնում է, որ դիմումատուները ստիպված են եղել ավելորդ առանձին բեռ կրել: Հետեւաբար վիճարկվող օտարումն իրականացվել է Կոնվենցիայի թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածի խախտմամբ:

II. ԿՈՆՎԵՆՑԻԱՅԻ 6-ՐԴ ՀՈՂՎԱԾԻ 1-ԻՆ ԿԵՏԻ ԵՆԹԱԴՐՅԱԼ ԽԱԽՏՈՒՄԸ

74. Դիմումատուները բողոք են ներկայացրել Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետի մասով, որ արդար դատաքննության իրենց իրավունքն իրենց գործի շրջանակներում խախտվել է, քանի որ դատարաններն իրենց հակառակորդի կողմից ներկայացված գնահատման եզրակացությունը դիտարկել են որպես

իրենց գույքի շուկայական արժեքի հաստատված ապացույց, եւ որ իրենք այն արդյունավետորեն վիճարկելու հնարավորություն չեն ունեցել: Նրանք մասնավորապես պնդել են, որ դատարանները չեն իրականացրել դատական փորձաքննություն նշանակելու իրենց հայեցողական լիազորությունը գույքի իրական շուկայական արժեքը որոշելու մասով՝ հաշվի առնելով այն, որ դիմումատուները չեն մասնակցել գնահատման գործընթացին եւ չեն կարողացել ներկայացնել իրենց առարկությունները: Ավելին, դիմումատուները, նույն դրույթի հիման վրա, պնդել են, որ Վճռաբեկ դատարանը մերժել է վերականգնել վճռաբեկ բողոք ներկայացնելու ժամկետները՝ առանց հաշվի առնելու այն փաստը, որ Վերաքննիչ քաղաքացիական դատարանն իրենց փաստաբանին չի տրամադրել իր՝ 2009 թվականի օգոստոսի 7-ի վճիռը, ով, հետեւաբար, զրկված է եղել ժամանակին վճռաբեկ բողոք ներկայացնելու հնարավորությունից:

75. 6-րդ հոդվածի 1-ին կետի համապատասխան հատվածն ունի հետևյալ բովանդակությունը.

«Յուրաքանչյուր ոք, երբ որոշվում են իր քաղաքացիական իրավունքներն ու պարտականությունները ... ունի արդարացի ... լսումների իրավունք»:

76. Հաշվի առնելով գործի փաստերը, կողմերի դիտողություններն ու դիմումատուներին գույքից զրկելու առնչությամբ Թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածի խախտում հայտնաբերելու մասին որոշումը՝ Դատարանը համարում է, որ այն քննել է սույն գանգատում բարձրացված հիմնական իրավական հարցը: Հետեւաբար այն եզրակացնում է, որ Կոնվենցիայի 6-րդ հոդվածի առնչությամբ դիմումատուների բողոքների մասով առանձին որոշում կայացնելու անհրաժեշտություն չկա (տե՛ս, *mutatis mutandis* (համապատասխան փոփոխություններով), *Կամիլ Ուզունն ընդդեմ Թուրքիայի* [*Kamil Uzun v. Turkey*], թիվ 37410/97, § 64, 2007 թվականի մայիսի 10):

III. ԿՈՆՎԵՆՏԻԱՅԻ 41-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ ԿԻՐԱՌՈՒՄԸ

77. Կոնվենցիայի 41-րդ հոդվածի համաձայն՝

«Եթե Դատարանը գտնում է, որ տեղի է ունեցել Կոնվենցիայի կամ դրան կից արձանագրությունների խախտում, իսկ համապատասխան Բարձր պայմանավորվող կողմի ներպետական իրավունքն ընձեռում է միայն մասնակի հատուցման հնարավորություն, ապա Դատարանը որոշում է, անհրաժեշտության դեպքում, տուժած կողմին արդարացի փոխհատուցում տրամադրել»:

Ա. Վնասը

78. Դիմումատուները պահանջել են 26 635 եվրո՝ որպես նյութական վնասի հատուցում: Ըստ դիմումատուների՝ պահանջվող գումարն արտահայտել է նույն ժամանակահատվածում նույն համայնքի տարածքում հողի վաճառքի ու վարձակալության գները: Նրանց հաշվարկի հիմքում ընկած էր մեկ քառակուսի մետր հողի համար 3 000 ՀՀ դրամը: Դիմումատուները նաեւ պահանջել են 3 000 եվրո (Կոնվենցիայի 6-րդ հոդվածի խախտման համար) եւ 7 000 եվրո (Կոնվենցիայի թիվ 1-ին արձանագրության 1-ին հոդվածի խախտման համար)՝ որպես ոչ նյութական վնասի հատուցում:

79. Կառավարությունը համարել է, որ դիմումատուները չեն ներկայացրել իրենց նյութական վնասի փոխհատուցման պահանջները հիմնավորող որեւէ ապացույց, որոնք չափազանցված են: Ուստի այդ պահանջները պետք է ամբողջությամբ մերժվեն: Ինչ վերաբերում է ոչ նյութական վնասին, ապա Կառավարությունը համարել է, որ պահանջվող գումարները չափազանցված են եւ որեւէ փաստաթղթային ապացույցով հիմնավորված չեն:

80. Հաշվի առնելով հայտնաբերված խախտման բնույթը՝ Դատարանը գտնում է, որ դիմումատուները, անկասկած, կրել են նյութական եւ ոչ նյութական որոշ վնասներ (տե՛ս, *mutatis mutandis*, Մոսկալն ընդդեմ Լեհաստանի [Moskal

v. Poland], թիվ 10373/05, § 105, 2009 թվականի սեպտեմբերի 15, տե՛ս նաեւ վերելում հիշատակված՝ *Օսմանյանի եւ Ամիրադյանի* գործը, § 75): Հաշվի առնելով սույն գործի հատուկ հանգամանքները՝ Դատարանը, կատարելով իր գնահատումն արդարության սկզբունքի հիման վրա, ինչպես պահանջվում է Կոնվենցիայի 41-րդ հոդվածով, դիմումատուներին միասին շնորհում է 8 600 եվրո՝ վնասի բոլոր մասերով:

Բ. Ծախսերը եւ ծախքերը

81. Դիմումատուները նաեւ պահանջել են 7 000 եվրո՝ որպես հատուցում ներպետական դատարաններում եւ Դատարանում կրած ծախսերի եւ ծախքերի համար:

82. Կառավարությունը նշել է, որ դիմումատուները որեւէ մանրամասն փաստաթուղթ չեն ներկայացրել, ինչպես պահանջվում է Դատարանի կանոնակարգի 60-րդ կանոնով, եւ ուստի սույն պահանջը պետք է մերժվի: Ամեն դեպքում, գումարը պետք է նվազեցվի:

83. Հաշվի առնելով իր տրամադրության տակ եղած փաստաթղթերը եւ իր նախադեպային իրավունքը՝ Դատարանը մերժում է ծախսերի եւ ծախքերի մասով պահանջը՝ համապատասխան հիմնավորող փաստաթղթերի բացակայության պատճառով:

Գ. Չկատարման դեպքում հաշվարկվող տոկոսադրույքը

84. Դատարանը գտնում է, որ չկատարման դեպքում հաշվարկվող տոկոսադրույքը պետք է հիմնված լինի Եվրոպական կենտրոնական բանկի սահմանած՝ լոմբարդային ռեպոյի տոկոսադրույքի վրա, որին պետք է գումարվի երեք տոկոսային կետ:

ԱՅՍ ՀԻՄՆԱՎՈՐՄԱՄԲ ԴԱՏԱՐԱՆԸ ՄԻԱԶԱՅՆ՝

1. Հայտարարում է Թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածի մասով բողոքն ընդունելի.

2. Վճռում է, որ տեղի է ունեցել Կոնվենցիայի թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածի խախտում.

3. Վճռում է, որ Կոնվենցիայի 6-րդ հոդվածի մասով բողոքն առանձին քննելու անհրաժեշտություն չկա, եւ գանգատը մնացած մասով հայտարարում է անընդունելի.

4. Վճռում է, որ՝

ա) պատասխանող պետությունը երեք ամսվա ընթացքում նյութական եւ ոչ նյութական վնասի դիմաց պետք է դիմումատուներին վճարի 8 600 եվրո (ութ հազար վեց հարյուր եվրո), որը պետք է փոխարկվի պատասխանող պետության արժույթով՝ վճարման օրվա դրությամբ գործող փոխարժեքով՝ գումարած գանձման ենթակա ցանկացած հարկ.

բ) վերը նշված եռամսյա ժամկետի ավարտից հետո՝ մինչեւ վճարման օրը, պետք է հաշվարկվի վերոնշյալ գումարների նկատմամբ պարզ տոկոսադրույք՝ չկատարման ժամանակահատվածում Եվրոպական կենտրոնական բանկի սահմանած՝ լոմբարդային ռեպոյի տոկոսադրույքի չափով՝ գումարած երեք տոկոսային կետ.

5. Մերժում է դիմումատուների՝ արդարացի փոխհատուցման պահանջի մնացած մասը:

Կատարված է անգլերենով եւ գրավոր ծանուցվել է 2019 թվականի փետրվարի 14-ին՝ համաձայն Դատարանի կանոնակարգի 77-րդ կանոնի 2-րդ եւ 3-րդ կետերի:

Ռենատա Դեգեներ

Քսենյա Տուրկովիչ

Քարտուղարի տեղակալ

Նախագահ